Գ4

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՊՁԲ-11/ 90 -2017

ՀՀ ԿԱ ԱԱԾ-ԿԿՏՎ-ԱՊՁԲ-17/1-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/8

ք. Երևան «28» 03 2017 թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա.Հակոբյանի, որը գործում է ծառայության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Էն գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խառատյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված «Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր» /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

1.2. Ապրանքի մատակարարումը սկսվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից, մատակարարումը իրականացվում է վեց ամսվա ընթացքում՝ մինչև 2017թ-ի օգոստոսի 31-ը:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **1 744 300 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար երեք հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրը** (առնվազն 365 օրացուցային օրը)[1]:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[2]:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում հիմնական միջոց:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում հիմնական միջոց:*

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[3] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԿԱ ԱԱԾ **ք.Երևան, Նալբանդյան 104** **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի** **գործառնական վարչություն** **Հ/Հ 900011301067** **ՀՎՀՀ 01507079**	**«Էն գրուպ» ՍՊԸ** **ՀՀ, ք. Արմավիր, Մանուշյան փ., տ.20** **«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արմավիրի մ/ճ** **Հ/Հ 205032202645** **ՀՎՀՀ 04424087**
Տնօրենի տեղակալ	**Տնօրեն**
Ա. Հակոբյան	**Ա. Խառատյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«28» 03 2017թ. կնքված
N ԿԲՊ-11/90-2017 ծածկագրով գնման պայմանագրի

«Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի»
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ*

Չափ-րի հ/հ	Կոդեր	Ապրանքի անվանումը	Չ/մ	Տեխնիկական բնութագրերը և այլ պահանջներ
1	2	3	4	5
11	30121450/11/4/2	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	հատ	Քարտրիջի չիպ, նախատեսված Samsung scx-3400 տպիչի համար
27	30121460/13/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner C8728A TRI-COLOR, տպման ռեսուրսը 1100 էջ
28	30121460/14/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner C1823D TRI-COLOR, տպման ռեսուրսը 1200 էջ
29	30121460/15/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner 122 color (CH562HE), նախատեսված է HP DJ 1000/1050A/2000/2050A/2054A/ 3000/3050A/3052A/3054A տպիչների համար
30	30121460/16/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner BJC 250, BC 05 Color Ink Cartridge, տպման ռեսուրսը 550 էջ
31	30121460/17/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner Ep26/27, նախատեսված է Canon LBP3100/3110/3200 Canon ICMF3112/3220/3222/5770 /5750/5730/5650/5630 տպիչների համար, տպման ռեսուրսը 2500 էջ
33	30121460/19/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner 972 A (920 c), նախատեսված է HP officejet 6000/6500/6500A/7000/7500/7500A տպիչների համար
34	30121460/20/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner 973 A (920 m), նախատեսված է HP officejet 6000/6500/6500A/7000/7500/7500A տպիչների համար
35	30121460/21/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner 974 A (920 y), նախատեսված է HP officejet 6000/6500/6500A/7000/7500/7500A տպիչների համար
36	30121460/22/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ Politoner CL-51 Color, նախատեսված է PIXMA MP150, PIXMA MP160, PIXMA MP170, PIXMA MP180 տպիչների համար
45	30121460/31/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner PG50 Black , նախատեսված է PIXMA MP150, PIXMA MP160, PIXMA MP170, PIXMA MP180 տպիչների համար
48	30121460/34/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջի չիպ Politoner 106R02773, նախատեսված է Xerox Phaser 3020/WorkCentre 3025 տպիչների համար, տպման ռեսուրսը 1500 էջ
53	30121460/39/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner MLT-D101S նախատեսված է Samsung ML- 2161/2160/2165/2166W/2165W SCX3400/3401/3405/3406/ 3407/3401FH/3405W /3405FW/3406W/3406HW/SF-761/761P/760P տպիչների համար, տպման ռեսուրսը 1500 էջ
56	30121460/42/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Ֆաքսի ժապավեն FA136, նախատեսված է KX-FP200/205 համար
61	30121460/47/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner MLT-111S նախատեսված է Samsung ProXpress SL- M2020/2020W/2022/2022W/2070/2070W /2070F/2070FW/202 տպիչների համար, տպման ռեսուրսը 1000 էջ
63	30121460/49/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner 106R02773, նախատեսված է Xerox Phaser 3020/WorkCentre 3025 տպիչների համար, տպման ռեսուրսը 1500 էջ
68	30121460/54/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner 94 Black Inkjet Print Cartridge (C8765W), նախատեսված է HP DeskJet 460 տպիչի համար
69	30121460/55/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner 95 Tri-color Inkjet Print Cartridge (C8766W) նախատեսված է HP DeskJet 460 տպիչի համար

74	30121460/60/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner PGI-450XL BK նախատեսված է PIXMA IP7240/MG5440/MG6340/MX924 /MG7140/MG6440/MG5540 տպիչների համար
75	30121460/61/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner CLI-451XL BK նախատեսված է PIXMA IP7240/MG5440/MG6340/MX924 /MG7140/MG6440/MG5540 տպիչների համար
76	30121460/62/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner CLI-451XLC նախատեսված է PIXMA IP7240/MG5440/MG6340/MX924 /MG7140/MG6440/MG5540 տպիչների համար
77	30121460/63/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, PoUtoner CLI-451 XL M նախատեսված է PIXMA IP7240/MG5440/MG6340/MX924 /MG7140/MG6440/MG5540 տպիչների համար
78	30121460/64/4/2	տոներային քարտրիջներ	հատ	Քարտրիջ, Politoner CLI-451 XL Y նախատեսված է PIXMA IP7240/MG5440/MG6340/MX924 /MG7140/MG6440/MG5540 տպիչների համար
85	30121470/3/4/2	տոներ լազերային տպիչների/հեռապատճենահանող մեքենաների համար	հատ	Տոներ, Politoner V5915/1921 Տուբա, նախատեսված է Xerox Vivace 5915/5918/5921 տպիչների համար

Ծանոթություն՝ Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը: Ապրանքները պետք է լինեն գործարանային փաթեթավորմամբ:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԿԱ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Էն գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Արմավիր, Մանուշյան փ., տ.20
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արմավիրի մ/ճ

Հ/Հ 205032202645
ՀՎՀՀ 04424087

Տնօրեն

Ա. Խառատյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«28» 03 2017թ. կնքված
N ԱԳՊՄ-11/90-2017 ծածկագրով գնման պայմանագրի

«Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի»

ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չափ-նի համարը	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ						Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
11	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	հատ	2 400	0	0	5	12 000	5	12 000	10	24 000
27	տոներային քարտրիջներ	հատ	5 400	0	0	1	5 400	2	10 800	3	16 200
28	տոներային քարտրիջներ	հատ	8 760	0	0	2	17 520	2	17 520	4	35 040
29	տոներային քարտրիջներ	հատ	5 760	0	0	2	11 520	2	11 520	4	23 040
30	տոներային քարտրիջներ	հատ	4 560	0	0	2	9 120	3	13 680	5	22 800
31	տոներային քարտրիջներ	հատ	3 960	0	0	2	7 920	3	11 880	5	19 800
33	տոներային քարտրիջներ	հատ	2 280	0	0	2	4 560	3	6 840	5	11 400
34	տոներային քարտրիջներ	հատ	2 280	0	0	2	4 560	3	6 840	5	11 400
35	տոներային քարտրիջներ	հատ	2 280	0	0	2	4 560	3	6 840	5	11 400
36	տոներային քարտրիջներ	հատ	9 600	0	0	4	38 400	4	38 400	8	76 800
45	տոներային քարտրիջներ	հատ	3 600	0	0	5	18 000	5	18 000	10	36 000
48	տոներային քարտրիջներ	հատ	4 620	0	0	10	46 200	10	46 200	20	92 400
53	տոներային քարտրիջներ	հատ	6 168	0	0	10	61 680	10	61 680	20	123 360
56	տոներային քարտրիջներ	հատ	2 160	0	0	16	34 560	14	30 240	30	64 800
61	տոներային քարտրիջներ	հատ	7 500	0	0	34	255 000	16	120 000	50	375 000
63	տոներային քարտրիջներ	հատ	8 280	80	662 400	0	0	0	0	80	662 400
68	տոներային քարտրիջներ	հատ	6 120	0	0	2	12 240	2	12 240	4	24 480
69	տոներային քարտրիջներ	հատ	6 120	0	0	2	12 240	2	12 240	4	24 480
74	տոներային քարտրիջներ	հատ	1 750	0	0	1	1 750	1	1 750	2	3 500
75	տոներային քարտրիջներ	հատ	1 750	0	0	1	1 750	1	1 750	2	3 500
76	տոներային քարտրիջներ	հատ	1 750	0	0	1	1 750	1	1 750	2	3 500
77	տոներային քարտրիջներ	հատ	1 750	0	0	1	1 750	1	1 750	2	3 500

78	տոներային բարտրիջներ	հատ	1 750	0	0	1	1 750	1	1 750	2	3 500
85	տոներ լազերային տպիչների/ հեռապատճենահանող մեքենաների համար	հատ	9 000	0	0	4	36 000	4	36 000	8	72 000
Ընդամենը				X	**662 400**	X	**600 230**	X	**481 670**	X	**1 744 300**

Ծանոթություն՝ Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԿԱ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Էն գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Արմավիր, Մանուշյան փ., տ.20
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արմավիրի մ/ճ

Հ/Հ 205032202645
ՀՎՀՀ 04424087

Տնօրեն

Ա. Խառատյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
«28» 03 2017թ. կնքված
N 09/27-11/90-2017 ծածկագրով գնման պայմանագրի

«Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի»
ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.'ըստամիսների' ընդորում										
		մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
11	լուսապատճենահանող սարքավորումների մասեր և պարագաներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
27	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
28	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
29	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
30	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
31	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
33	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
34	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
35	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
36	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
45	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
48	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
53	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
56	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
61	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
63	տոներային քարտրիջներ	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
68	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
69	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
74	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
75	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
76	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
77	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%

78	տոներային քարտրիջներ	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%
85	տոներ լազերային տպիչների/հեռապատճեն ահանող մեքենաների համար	0%	50%	50%	50%	81%	81%	81%	100%	100%	100%	100%

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԿԱ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Էն գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք. Արմավիր, Մանուշյան փ., տ.20
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Արմավիրի մ/ճ

Հ/Հ 205032202645
ՀՎՀՀ 04424087

Տնօրեն

Ա. Խառատյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 4
«____»_____2017թ. կնքված

N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
«____»_____2017թ. կնքված

N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն